

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ՏԵՂԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
БИОЛОГИЧЕСКИЕ И СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ НАУКИ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ԾՐԵԿԱՆ

1959

ЕРЕВАН

Հ. Գ. ԲԱՏԻԿՅԱՆ

Մ Ե Մ Բ Ի Ո Ւ Ո Գ Ը

Մոլիստական հասարակությունը, ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը նշում է աշխարհահռչակ գիտնական, բնախույզ Չարլզ Դարվինի ծննդյան 150—ամյակը: Այս տարի լրանում է նաև նրա «Տեսականների ծագումը» հանճարեղ աշխատության լույս ընծայման 100—ամյակը:

XIX դարի ընթացքում, բացի Մարքսի և Դարվինի անուններից, անկարելի էր նշել ուրիշ անուններ, որոնք միլիոնավոր մարդկանց գաղափարների մեջ, հասարակության և բնության մեջ հսկայական հեղաշրջում առաջ բերած լինեին: Այս տեսական երկու մեծ գաղափարները՝ թե մարքսիզմը և թե Դարվինիզմը աճեցին գարաշրջանի պատմական, սոցիալական և գործնական պահանջներից: Այդ երկու ուսմունքները հանդիսանում են հսկայական սինթեզներ, թեպետ և ոչ հավասարաբեկ: Նրանք երկուսն էլ գործնական ներդրածության հզոր լծակներ են, աշխարհք փոխելու կատարյալ գործիքներ: Եվ, վերջապես, չնայած նրանց տարբեր սոցիալական ծագմանը, մարքսիզմը իր աշխարհայեցողության մեջ ընդգրկում է Դարվինի տեսությունը՝ նրա էական մոմենտներով վերցրած:

Դարվինի «Տեսականների ծագումը» աշխատությունը լույս է տեսել 1859 թվականին, ալսինքն հենց այն թվականին, երբ հրապարակ է եկել Մարքսի «Քաղաքացիականության քննադատության շուրջը» աշխատությունը:

Անգլիական կապիտալիզմի ապրած գարաշրջանը այն ժամանակ նրա հաղթական ամրացման գարաշրջանն էր: Գյուղատնտեսություն մեջ կատարվեց մեծ շրջադարձ: Ագրոքիմիայի, անասնաբուժության, բուսաբանության, գյուղատնտեսական մեքենաշինության և այլ բնագավառներում տեղի ունեցած գյուտերը իրենց համար խոշորագույն բազա էին ստացել:

Ահա այսպիսի գարաշրջանում է հանդես գալիս խոշորագույն բնագիտական Զ. Դարվինը: Նա աճել է կենդանի բնության պրակտիկայից, և հենց դրա մեջ է նրա ուժը: Տեսականների փոփոխության մեծ գաղափարի հիմնավորումն ու բացատրությունը աճել է այդ պրակտիկայի տեսական ընդհանրացումներից:

Այդ շրջանում էքսպեդիցիաներ էին կազմակերպվում գաղութային կրկրների հարստությունների՝ ճանապարհները ուսումնասիրելու նպատակով: Էքսպեդիցիաները քողարկված էին «գիտական» և «բարի» նպատակներով: Կազմակերպվեց նաև «Բիզլ» նավով ճանապարհորդությունը, որին մասնակցեց Զ. Դարվինը:

Այսպիսով, անգլիական արտադրության գարգացումը, գաղութային էքսպանսիան և, ամենից առաջ, գյուղատնտեսության հաստատուն վերելքը այն բազան էին, որի վրա առաջանում էին մեծ Դարվինի տեսական գաղափարները:

Ո՞ր չի լսել Դարվինի անունը: Բնագիտության մեջ չկա մի այլ անուն,

որ նույնքան հաշակված լինեն, որքան Դարվինի տնունը: Դարվինի գաղափարները դարձել են նորագույն բնագիտության հոգին:

Դարվինը բնության բոլոր երևույթներին տվեց իսկական մատերիալիստական բացատրություն: Նա ցույց տվեց, որ էվոլյուցիայի համար գերնական ուժերի միջամտություն չի պահանջվում: Նա քայքայեց, թե ինչու և ինչպե՞ս են առաջացել օրդանիդները, ինչո՞ւ են դուպլեկ բնության մեջ առավել բարդ ու նպատակային հարմարանքներ և այն էլ առանց «արարչի» որևէ միջամտության:

Պատմությունը հայտնի են դիտություն մեջ ոչ սակավաթիվ պանծալի մարդիկ, որոնք, հրաժարվելով հետևել հաստատված աբսոլյուտիզմներին, վճռալիտորեն պայքարել են ամեն տեսակ քարոջանություն ու անշարժության դեմ, նորանոր ուղիներ են հարթել բնության օրինների հանաչման ասպարեզում և դրա համար էլ վստահել են առաջադեմ մարդկություն սերն ու երախտագիտությունը:

Գիտության այդ զիտարանված դործիչներն մեջ ոչ սակավաթիվ տեղ է գրավում անդլիսացի մեծ բնախույզ Ջորջ Դարվինը: Մեծ ուղղացիոնները բնախառնության մեջ՝ իր ամբողջ կյանքը նվիրեց ժողովրդի դեղեցիկ և լուսավոր իրանքի համար մղվող պայքարին: Այդ մեծ գիտնականի սխրագործությունները, որոնք նպաստել են XIX և XX դարերի բիոլոգիայի ուժեղ զարգացմանը, տարիներն ընթացրում ոչ միայն չթուլացան, այլև ավելի ուժեղացան և ձևեր բերեցին մեծ հմայք: Դարվինի անվան հետ կապված է բնագիտության պատմության մեջ միանգամայն նոր դարաշրջանի՝ դարվինիզմի դարաշրջանի առաջացումը: Դարվինիզմը իրենից ներկայացնում է մատերիալիստական մի նոր գիտություն ժամանակակից բուսական ու կենդանական ձևերի ծագման և դարգացման մասին: Այդ նոր գիտությունը հնարավորություն տվեց պատասխանելու դժվար, մինչև Դարվինը չլուծված աշխարհայեցրալին այնպիսի հարցերի, ինչպիսիք են օրդանիդների զարմանալի հարմարվողականությունը գոյություն պտմաններին, էվոլյուցիոն պրոգրեսի գործոնները և այլն:

Մինչև Դարվինը գոյություն ունեին և զարգանում էին բիոլոգիայի առանձին բնագավառները (բուսաբանությունը, կենդանաբանությունը, մարդաբանությունը, հնէաբանությունը, սաղմնաբանությունը և այլն): Բնությունը գիտում էին նրա առանձին մասերով, ստացվում էր, կարծես թե, մի մոզալիկա բնության գիտական տվյալներն մասին: Դարվինի գաղափարները ի մի բերեցին այդ բոլորը և ստեղծեցին մի ընդհանուր մատերիալիստական բիոլոգիական գիտություն: Դարվինը բացահայտեց բնության զարգացման պատմությունը: Իր էվոլյուցիոն տեսությունը Դարվինը ստեղծեց գլոբալ տեսական պրակտիկայի հիման վրա: Մինչև Դարվինը եղած գիտական-բիոլոգիական ոչ ոք չբարձրացրեց, արդյուն և չգնահատեց միլիոնավոր գլոբալ տեսական աշխատողների, ֆերմիներների աշխատանքի նշանակությունն ու փորձը: Բայց մի թե՛ս պարզ չէր, որ բաղձաթիվ կենդանական տեսակներ և բուսական սորտերը սանդղավել են հենց այդ մարդկանց ժրջան աշխատանքի շնորհիվ:

Դարվինիզմը հանդիսանում է մեծ բիոլոգիական տեսություն, որ հսկայական նշանակություն ունի ամբողջ մատերիալիստական աշխարհայեցողության համար:

Մինչև Դարվինը բնագետների մեծ մասը պատասխանել է այն հարցերին, թե ինչպե՞ս է լողում, օրինակ, ձուկը, ինչպե՞ս է թռչում թռչունը, ինչպե՞ս են կառուցված տարբեր բույսերի ծաղիկները: Իսկ ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ է այդքան մեծ նմանություն նկատվում կենդանիների և մարդու ստղմնային զարգացման վաղ շրջաններում:

Կրոնը սովորեցնում է, որ կուլտուրական բույսերը և ընտանի կենդանիները ստեղծված են աստծու կողմից, որպեսզի բավարարեն մարդկանց պահանջմունքները: Բայց ո՞ւմ հայանի չէ, որ մարդկանց և ոչ թե աստծու միջոցով են ստեղծվել շատ նոր, ավելի կատարելագործված կենդանական տեսակներ ու բուսական սորտեր:

Շատ փաստեր գիտնականներին բերում էին այն մտքին, որ օրգանիզմների միջև մեծ կապ գոյություն ունի, և որ զարգացումը ընթանում է աստիճանաբար: Բայց ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով է ընթանում այդ զարգացումը, ինչպե՞ս է մի տեսակը վերածվում մեկ ուրիշ տեսակի, ինչպե՞ս են առաջացել բույսերը և կենդանիները—այս հարցերը մնում էին անհասկանալի և զսպանի:

Եվ ահա լույս տեսավ Չ. Դարվինի «Ճնշակների ծագումը» աշխատությունը: Կարծես վառ լույսի պես նա ցույց տվեց մոլորված մարդկանց ճանապարհը մութ դիժերիվա պահին: Այդ աշխատանքում Դարվինը պատասխանում է ստեղծվածային հարցերից մեկին՝ ինչո՞ւ են առաջ եկել կենդանի օրգանիզմները: Նրանք առաջացել են միմյանցից՝ էվոլյուցիայի, այսինքն ստանձնական զարգացման սլոգանում:

Ակերում ստաջացել են ամենատուրին օրգանիզմները, ապա նրանցից՝ ավելի բարդ ձևերը: Այդ պրոցեսն ընթացել է միլիոնավոր տարիներ, ընթանում է և ներկայումս, ընթանալու է նաև ապագայում, առանց դերբնական ուժերի մասնակցության:

Ջարմանալի մեծ նմանություն կա կենդանական և բուսական աշխարհում: Այս բոլորը ցույց է տալիս նրանց ընդհանուր ծագումը: Բայց որքան խորն ենք թափանցում երկրաբանական շրջանների մեջ, այնքան մեծ են հին և ներկա կենդանական աշխարհի միջև եղած տարբերությունները: Այս ցույց է տալիս, որ կենդանիներն ու բույսերը միշտ և աստիճանաբար փոփոխվել են: Այս առբեր բավական է, որ մենք եզրակացնենք, թե տարբեր տեսակներ ծագել են միևնույն նախահայրերից, որոնք մի ժամանակ ապրելիս ևս եղել մեր մոլորակի վրա:

Դարվինի «Ճնշակների ծագումը» հանճարեղ աշխատությունը, որը լույս տեսավ 1859 թվականին, խորտակիչ հարված հասցրեց քարացած մետաֆիզիկական աշխարհայացքին, կրոնական հայացքներին: Դարվինը խորտակեց բիլոգիական տեսակի անփոփոխություն, մնացան էություն գաղափարը: Նա առաջին անգամ համոզիչ կերպով ապացուցեց, որ կենդանի բնությունն իրենից ներկայացնում է զարգացման անընդհատ պրոցես, որ այդ զարգացումն ընթանում է պարզից դեպի բարդը, ցածրից՝ սուղրինից դեպի բարձրը, որ ժամանակակից կենդանիների ու բույսերի տեսակները երևան են եկել ոչ միանգամից պատրաստի վիճակում, այլ հետևանք են միլիոնավոր տարիների զարգացման:

«Ճնշակների ծագումը» աշխատությունն նշանակությունը չի սահմանա-

խիստ նպաստեց զիտության մեջ մետաֆիզիկայի թուլացման, Մարքսի-Լեն-գելսի զիալեկտիկա-մատերիալիստական աշխարհայացքի ամրապնդման գործին:

Դարվինի թեորիան լատալորեց բոլորգիայի բոլոր շրջանները, զիտության մեջ առաջ բերեց իսկական սեռյալացիա, զիտական տեսակետից հզավ վերին աստիճանի բեզմնավոր:

Նշելով Դարվինի այդ մեծ ծառայությունը, Լենինը գրում էր, որ նա «...վերջ դրեց այն հայացքին, ըստ որի կենդանիների և բույսերի տեսակները ոչ մի բանով կապակցված չեն միմյանց հետ, պատահական են «Աստծո ստեղծած» ու անփոփոխելի, և առաջին անգամ միանգամայն դիտական հոդի վրա դրեց բոլորգիան՝ սահմանելով տեսակների փոփոխելիությունը և նրանց հաջորդականությունը...» (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, 1941, էջ 160):

Մեր ժամանակներում դարվինիզմը միայն աշխարհը բացատրող գիտական տեսություն չի հանդիսանում: Նա վերածվեց մի հզոր զենքի, որը մարդկությունն օգնում է այդ աշխարհը գործնականորեն վերափոխելու:

Դարվինը պարզ պատկերացնում էր այն համարյա անհաղթահարելի դժվարությունները, որոնց տալիս կանգնած էր իր տամուկը, որը մարտահրավեր էր ուղղում տիրապետող խղճախոտական, տերտերական, աշխարհայացքին: Նա բոլորգիայի մեջ առաջին անգամ մտքից պատմական մեթոդը, որի շնորհիվ օրգանական աշխարհի ամբողջ պատկերը երևաց նոր լուսարանությունով: Դարվինը ցույց տվեց, որ էվոլյուցիան բացատրելու համար չի պահանջվում գերբնական ուժի մասնակցություն, էվոլյուցիայի հիմքը, նրա շարժիչ ուժը հանդիսանում է բնական ընտրությունը, որը նյութ է վերցնում օրգանիզմների հիմնական հատկանիշներից, անսահման բազմացումից, փոփոխականությունից և ժառանգականությունից:

Դարվինը մատերիալիստորեն բացատրեց կենդանիների և բույսերի կառուցվածքի նպատակահարմարությունը: Նա ապացուցեց, որ օրգանիզմի կառուցվածքում դիտվող հաջարեքական նպատակահարմարությունն առաջացել է երկարատև բնական ընտրության հետևանքով:

Այսպիսով, հենց կյանքի հասկացողությունից բխող բնական ընտրությունը բնության մեջ միլիոնավոր տարիների ընթացքում նպաստել է միշտ նոր և նոր, ավելի կատարելագործված ձևերի հանդես գալուն:

Բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ գործոնն է: Դարվինը հաստատում է, որ բնության մեջ չկա ոչ մի բացարձակ նպատակահարմարություն և կատարելագործություն, բնական ընտրությունը օրգանիզմներին հարմարեցնում և կատարելագործում է միայն բնական միջավայրի նկատմամբ: Հարմարվելու պատճառները, ըստ Դարվինի, պետք է փնտրել օրգանիզմից դուրս՝ նրա գոյության պայմաններում, բնական ընտրության մեջ: Բնությունն ինքն ընտրում է ավելի կատարելագործված փոփոխություններով օրգանիզմները: Այսպիսով, Դարվինն ապացույցեց, որ բոլոր փոփոխությունները հարմարվում են գոյության պայմաններին, նրանք բարդանում և կատարելագործվում են: Նա հարուստ նյութերով ցույց տվեց, թե շրջապատող միջավայրի նկատմամբ շատ բուսական ու կենդանական օրգանիզմների դարմանք պատճառող հարմարությունները ինչպե՞ս առաջացան և ինչպե՞ս կատարելագործվեցին: Նա ժխտեց օրգանիզմի ինքնակատարելագործման և նպատակահարմարորեն փո-

փոխվելու մասին իրենալիստական տեսությունը: Իսկ ինչու են փոխվում կենդանիների հին տեսակները և առաջանում նորերը: Այն պատճառով, որ փոխվում է շրջապատող բնությունը, փոխվում են միջավայրի պայմանները: Այսպես կոչված «կենսական ուժերն» ալյտեղ երբեք չեն կարող որևէ դեր խաղալ: Այստեղ ոչ մի հրաշք չկա: Կենդանիներն ու բույսերը բաղմանում են բնության հայտնի օրենքներով: Պատկերացրեք, որ ծովի տեղը լցամաք է դառնում, հարթության վրա լեռներ են բարձրանում: Ի՞նչ է մնում անելու ալք վայրերի նախկին բնակիչներին, նրանք պետք է կա՞մ ոչնչանան, կա՞մ տեղափոխվեն նոր վայր և կա՞մ հարմարվեն նոր պայմաններին:

Օրգանական աշխարհի զարմանալի կատարելագործվածությունը բնության մեջ ուղղակի զարմացնում էր մարդուն: Իրանականները չէին կարողանում ճիշտ պատասխանել այս հարցին: Իսկ բնության ամեն մի հետազոտությունից հետո բացահայտվում էին մարդու առաջ նոր տվյալներ օրգանիզմների կատարելագործման վերաբերյալ: Ասեղծվածը մնում էր չլուծված, մինչև որ հանգես եկավ Դարվինը և ավելց ալք զաղանիքի իսկական բանալին:

Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի բնության մեջ գործեն փոփոխականության, ժառանգականության և բնորոշության նույն օրենքները, ինչ արհեստական պայմաններում:

Բնական պայմաններում արդյոք գոյություն ունի՞ ընտրություն, թե՞ ոչ: Իր էությունը արհեստական ընտրությունը չհարմարված օրգանիզմների ոչնչացման և հարմարվածների ապրելու ունակության մեջ է:

Դյուրություն ունի՞ արդյոք ալքալիսի ոչնչացման պրոցեսն նաև բնության մեջ: Այո, ալք պրոցեսը, գույց և ալելի ուժեղ կերպով, կատարվում է բնական պայմաններում:

Օրգանական աշխարհը ուժեղ և ինտենսիվ բաղմանում է և ամեն մի էակ կյանք է մտնում ուրիշ միլիոնավոր էակների ոչնչացման հաշվին: Կյանքի համար պալքար անդի ունի միաժամանակ և անօրգանական բնության հե՛տ:

Պալքար տեղի ունի և բնության տարերային ուժերի դեմ: Մի շարք պայմաններ նպաստավոր են մի տեսակների համար, որոնց թիվը մեծանում է, անբարենպաստ պայմանները, ընդհակառակը, կրճատում են տեսակների քանակը: Այսպիսով, հողալին, կլիմայական պայմանները կողմնակի կերպով աղղում են տեսակի ծաղկման պրոցեսի վրա: Բնական պայմաններում ընտրության հիմնական խթանը հանդիսանում է պալքարը:

Օրգանիզմների ամբողջ կյանքը կապված է գոյության պալքարի հետ: Պալքարի ալք ձևերը, կապված միջավայրի պայմանների հետ, տարբեր են. մի դեպքում ալն արտահայտվում է տարբեր տեսակների միջև, մյուս դեպքում՝ գոյության անբարենպաստ պայմանների ու օրգանիզմների միջև:

Դյուրության պալքարի ընթացքում ոչնչանում են բոլոր ալն օրգանիզմները, որոնք զուրկ են մի շարք առավելություններից մյուսների նկատմամբ: Ապրում են և սերունդ են տալիս միալն ալն կենդանիներն ու բույսերը, որոնք օժտված են մի շարք օգտակար հատկանիշներով և որոնք ալելի լավ են հարմարված գոյության պայմաններին:

Ահա ալս պրոցեսը Դարվինը անվանեց բնական ընտրություն՝ նման արհեստական պայմանում արհեստական ընտրությանը: Պահպանվում են միալն օրգանիզմների ալն փոփոխությունները, որոնք ալելի լավ ու լավ են հարմարվում կյանքի պայմաններին:

Սակայն սխալ կլինե՞ր ենթադրել, որ բնական ընտրությունը տանում է բոլոր ձևերը դեպի բացարձակ կատարելագործումը:

Մի՞թե գիշերալին թիթեռը չի թռչում դեպի կրակը ու ոչնչանում գրանից: Նա հավաքում է նեկտարը հիմնականում գիշերալին պարմաններում նկատելի սպիտակ ծաղիկներից: Այդ է պատճառը, որ նա ձգտում է դեպի կրակը՝ լույսը: Մի՞թե մեղվին չի պաշտպանում նրա իսպիծը: Բայց նա միաժամանակ հանդիսանում է և նրա կործանման պատճառը: Խալթեկուց հետո նա չի կարողանում թշնամու մարմնից դուրս քաշել իսպիծը և ինքը ոչնչանում է: Նշանակում է՝ բացարձակ հարմարություններում չկա, այն հարմարեցական էր, որով և նպաստավոր պայմաններ են ստեղծվում բուսական ու կենդանական օրգանիզմների զարգացման համար:

Դարվինիզմը ոչ միայն պալթեցրեց օրգանական բնությունը նկատմամբ կրոնական հայացքները, այլև, դրա հետ միասին, մարքսիզմի համար բնական գիտական հենարան հանդիսացավ պատմական գոսակարգալին պալքարի գործում: Դրանով էլ բացատրվում է գոսակարգալին այն սուր պալքարը, որ այժմ ծավալվում է դարվինիզմի շուրջը: Այդ պալքարն ստանում է զանազան ձևեր, սկսած իզեալիստների կողմից դարվինիզմի հիմունքների ժխտումից, վերջացնելով «սոցիալ-դարվինիզմի» և սոսալական կեղծ տեսություններիով:

Դարվինը իր ժամանակի և իր գոսակարգի զուպեն էր, և նրա ուսմունքի վրա ակնհայտ է սահմանափակվածություն կնիքը: Էնդելսը չսահմանափակվեց դարվինիզմի թույլ կողմերի ընդհանուր գնահատականով, այլ բացահայտեց Դարվինի սխալները, տալով օրգանական էվոլյուցիայի մի շարք հանդուցալին պրոբլեմներին դեպիկտիկական-մատերիալիստական հասկացողություն:

Դարվինը տվեց մարդու ծագման բնական գիտական բացատրությունը: Սակայն նա այդ հարցերը չկապեց սոցիալական պարմանների հետ, չնկատեց աշխատանքի գերը, արտադրության գործիքների գերը: Միայն Էնդելսի հանձարեղ միտքը հաստատեց կապի մարդացման պրոցեսում կռնկրեա պատմական օրինաչափությունը, մարդու ծագման սոցիալական ու շրտուգիական միասնությունը:

Դարվինն աշուտամենախիղ չրարծրացավ մինչև հետեոդական, իսկական պատմական տեսակետը: Օրինակ՝ Դարվինը միակողմանի կերպով է մեկնաբանել գոյություն համար մղվող պալքարը, բնդհանրացրել է ալդ բանաձևը, տալածել է այն, թեկուզ և որոշ վերապահումներով, մարդկալին հասարակության վրա:

Դարվինի կողմից ճանաչված օրգանական աշխարհի դարգացման օրենքների փոխադրումը մարդկալին հասարակություն վրա հանդիսանում է դարվինիզմի խարդախումբ: Միայն աշխատավոր մարդկության ուուլյուցիոն տեսություն և պրակտիկալի անբաժան միասնական զուղակցությունը, զինված դիալեկտիկական մասերիալիզմի մեթոդով, դարվինիզմից կարելի է վերցնել ամբողջ դրականը, գիտականը, դեհն ցցելով բուրժուական պատյանը, մաքրելով նրան քալքալման այն պրոդուկտներից, որոնց ժամանակակից բուրժուական կուլտուրան առաջացնում է այնպիսի առատություն:

Սովետական դարվինիստների փառավոր պլեադան հարստացրեց և կյանքում կիրառում է մեծ Դարվինի մեծագույն ուսմունքը: Դարվինի դարգացման

տեսութիւնները գնալով ավելի խորանում և հաստատուում է գիտութեան մեջ: Այստեղիցով առանձին սխալներէից և թերութիւններէից, Դարվինի ուսմունքը մնում է օրգանական աշխարհի զարգացման միակ գիտական տեսութիւնը:

Մեծ Դարվինը հայտնագործեց կենդանի բնութեան մի շարք կարևոր օրենքներ: Բուրժուական գիտնականները աշխատում էին թաքցնել Դարվինի ուսմունքի պրոգրեսիվ կողմերը: Տիմիրյազևը, Միչուրինը, Պավլովը, Լիսենկոն և արիշները զարգացրել են Դարվինի ուսմունքի մատերիալիստական կորիզը:

Բիոլոգիայի հարցերում Տիմիրյազևի, Միչուրինի թերեխական հիմնական դրույթները զարվինիզմի հետագա ստեղծագործական զարգացումն են: Կ. Ա. Տիմիրյազևը, հետազոտելով քլորոֆիլը, լիկավ աչն հզօրակացութեան, որ քլորոֆիլը էվոլյուցիայի լավագոյն ապացույցներից մնին է: Քլորոֆիլի միջոցով կանաչ բույսը հարմարված է արեգակի ճառագայթները կանելու համար:

Դարվինը և Միչուրինը՝ կենդանի բնութեան արդ երկու մեծ հետազոտողները, հասարակական տարբեր դասակարգչի շերտալացուցիչներ են, որոնցից լուրաքանչլուրն իր կշանքը նվիրել է բիոլոգիայի հարցերի լուծմանը, սակայն կենդանի բնութեան երեւելիների պատասիվ բացատրութեան փոխարեն, որը հաստի է Դարվինին, միչուրինյան ուսմունքը ձգտում է կենդանի բնութեւնը ռեուլյուցիոն վերափոխման ենթարկել հանուն կոմունիզմի հաղթանակի: Վերջան թուցիկ են մարդու իղձերն ու ձգտումները, — ասում է Դարվինը, — որքան կարճ են նրա օրերը—հետեւաբար և որքան խղճուկ են նրա ձեռք բերած արդիւնքները աչն արդիւնքների համեմատութեամբ, որ կուտակիլ է բնութեւնը ամբողջ երկրորդական ժամանակաշրջանի ընթացքում: Բոլորովին ուրիշ կերպ է հնչում աչն նշանաբանը, որն ասում է՝ Վարդը կարող է ավելի լաւ դարձնել բնութեւնը, — աչս խոսքերը պատկանում են ուուս ժողովրդի հանճարեղ պալակ, մեծ գիտնական Ի. Վ. Միչուրինին:

Մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ծառայութեանն աչն հղալ, որ նա շարունակեց և կոնկրետացրեց Դարվինի տեսութեւնը միջավայրի պայմանների նկատմամբ կենդանիների հարմարվելութեւնների մասին:

Շատ արժանաւոր արդիւնքներ է ստացել համաշխարհային գիտութեւնը վերջին՝ հետաքրքրական շրջանում: Շատ բան է արել գիտութեւնը, որայեղի բարձրացնի արտադրողական ուժերը, աշխատավոր մասսաների բարեկեցութեւնը: Բնագիտութեւն շատ բաժիններում մարդը լրիւ կերպով իրեն է ենթարկել բնութեւն անհնադանդ ուժերը:

Սովետական համաշխարհային պրոգրեսիւ ընական գիտութեւնը հանդիսանում է Դարվինի մեծագոյն ուսմունքի իսկական ժառանգորդը: Դարվինիզմը ապրում, զարգանում է, որովհետեւ նա լավարարում է ողջ առաջադեմ մարդկութեւն պահանջներին:

Ռ. Բ. ԳԱՐՐԻՆԵԼՅԱՆ

ԳԱՐՎԻՆԻ ՌԻՍՏՈՒՆՔԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զարդ Դարվինի «Տեսակների ծագումը» կլտսիկ աշխատությունը, որը լույս է տեսել 1859 թվականին, մեծ հեղաշրջում առաջ բերեց բնագիտության, մասնավորապես բիոլոգիայի բնագավառում: Օրգանական աշխարհի վերաբերյալ իդեալիստական տեսություններն անհիմն դարս եկան, գերակշռող դարձան Դարվինի հիմնավորված մատերիալիստական գրուլթները:

Պալքարը դարվինիզմի հարցերի շուրջը տեղի ուներ ոչ միայն գիտական շրջաններում, այլ այդ բանավեճին ներգրավվեցին նաև ոչ բնագիտ գործիչները, հասարակական լայն խավերը: Մի օրվա մեջ Անգլիայում տարածվեց «Տեսակների ծագումը» աշխատությունն առաջին հրատարակությունը: Դարվինի թե՛ ալք աշխատությունը, թե՛ «Մարդու ծագումը» և թե՛ այլ գործերն ունեցան մի քանի հրատարակություններ: «Տեսակների ծագումը» լույս տեսավ և մի շարք այլ երկրներում: Դարվինիզմի մասին լույս էին տեսնում նաև բազմաթիվ հոդվածներ, ակնարկներ, առանձին հրատարակություններ, նվիրված դարվինիզմին ամբողջաթյամբ Ռեակցիոն իդեալիստական շրջաններում մեծ ազմակ բարձրացավ, մանավանդ սաստիացան նրանց հարձակումները, երբ լույս տեսավ Դարվինի երկրորդ խոշորագույն աշխատությունը՝ «Մարդու ծագումը»:

Ինչպե՛ս արձագանքեցին Դարվինի ուսմունքին հույ մտավորականները, հասարակայնություն լայն խավերը: Դարվինի «Տեսակների ծագումը» հայերեն լույս տեսավ Հոկտեմբերյան ռեյոլյուցիայից հետո, 1936 թվականին, իսկ մինչ ալք «Կոլոժ» ժուռնալում (Պոլիս, 1911 թ.) հայերեն տաղադրվեց Դարվինի «Մարդու ծագումը» աշխատությունից միայն մի գլուխ: Ուշագրավն ալն է, որ դարվինիզմի մասին հայկական մամուլն արտահայտվեց տակավին Դարվինի կենդանություն օրով: Արեելահայ, ավիլի մեծ չափով արեմտահայ մամուլում (պարբերական և ոչ պարբերական) լույս տեսան բազմաթիվ ակնարկներ, հոդվածներ, ապա և քննադատական նյութեր թե՛ դարվինիզմի պրոբլեմների մասին, թե՛ Դարվինի ուսմունքի և սոցիալական պրոբլեմների հետ կապված հարցերի մասին: Դարվինիզմը գրավել էր հայերի ուշադրությունը ոչ միայն մամուլում, ալև կյանքում՝ դպրոցականներին, ուսանողներին, ռեյոլյուցիոն գործիչներին: Հանուն դարվինիզմի մղվող պալքարի լծվել էին ոչ միայն բնագիտները, ալև սկզբնական շրջանում, առավել մեծ չափով, նաև ոչ բնագիտական հասարակայնությունը: Մանի որ դարվինիզմը խոշոր հարված հասցրեց կրոնա-իդեալիստական աշխարհայնցողությանը, բնականաբար, նրա դեմ պալքարի դուրս եկան խավարամիտները, կղերականությունը և, բնականաբար, ջերմ պաշտպանների դերք բռնեցին պրոպրեկարի մատերիալիստ գործիչները:

Մեր ալս համառոտ ակնարկում մտադիր ենք արվադեկ ալն, թե նախասովետական շրջանում հալ գրականության մեջ և բր գրականության առհասա-

րակ էվոլյուցիայի պոպուլարը, ապա որ ժամանակահատից, ինչպե՞ս և ովքե՞ր արձագանքեցին անդլիացի նշանավոր բնագետ Դարվինի ուսմունքին:

Մինչդարձինչս ժամանակաշրջանում առաջին անգամ օրգանիզմների փոփոխականության, ազդակցական կապի և էվոլյուցիայի մասին 1844 թվականին, «Լադմալեպ» հանդիսի էջերում արտահայտվեց անհայտ մի հնգլինակ, Ալլ ժամանակ, թեև Դարվինի «Տեսական» դեռ չույժ չէր տեսել, բայց Դարվինն արդեն ուրվագծել էր իր ապագա նշանավոր ախտախոնքը: Դարվինից առաջ կալին, իհարկե, նշանավոր բնագետներ, ինչպե՞ս Լամարկ, Ժոզեֆ Կյուվիեր, Գյոմբե և ուրիշներ, որոնք օրգանական աշխարհի զարգացումը պատմ էին էվոլյուցիոն տեսանկյունով, կար և նշանավոր երկրաբան Ջորջ Լյանը, որը էվոլյուցիոն մոտեցումը կիրառեց 1830 թվականին իր «Երկրաբանության հիմունքները» աշխատության մեջ: Բայց և այնպես դիտության մեջ տիրապետում էր հակաէվոլյուցիոն իդեոլոգիան:

«Լադմալեպի» անստորագիր ակնարկում (Եկնդանյաց ստորաբաժանում) խոսվում է բրածոների մասին, որպես անցյալում ունեցած պլ տեսակի օրգանիզմների վավերացրեր, խոսվում է օրգանների կերակրիչի (ադերատկցության) մասին և ապա՝ այն մասին, որ օրգանիզմներն ազդակից են իրար և ծագել են բնականորեն մեկ աղբյուրից [1]:

Այդ առաջին անհամարձակ փորձին հաջորդում են ավելի որոշակի ելույթներ մամուլում: Մյուսայլ Նալրանդյանն էր առաջինը, որ գիտական փաստարկաբանությամբ հաղթանակեց օրգանիզմների էվոլյուցիային, նրա փոփոխականությանը ժամանակի մեջ, շեշտեց արտաքին միջավայրի խոշոր դերն ալլ պրոցեսում: Մ. Նալրանդյանն առաջինը, առանց Դարվինի անունը տալու, արձանագրեց նրա աշխատության հոլախալ նշանակությունը իդեոլոգիական բնագիտական հասկացությունների առաջնական գործում:

«Հյուսիսափայլ»-ի էջերում 1858 թվականին տպագրվում է Մ. Նալրանդյանի բնագիտական ակնարկը՝ «Աշխարհի կազմածք և նորա հրաշքները» վերնագրով [2]: Հայտնի է, որ Մ. Նալրանդյանը մի քանի տարի որպես Մոսկվայի համալսարանի բժշկական ֆաբրիկատի ուսանող ուսումնասիրել է բնական գիտությունները, լսել առաջավոր բնագետ գիտնականների դասախոսությունները, կարդացել, մտնականք, առաջադեմ բնագետ, մինչդարձինչս էվոլյուցիոնիստ Կարլ Ռուլինի ապագիք աշխատությունները: Կ. Ռուլինի ազդեցությունը ցայտուն կերպով երևում է Մ. Նալրանդյանի վերը նշած ակնարկում: Օրգանիզմների փոփոխության, էվոլյուցիայի փաստը, Ռուլինի օրինակով, Մ. Նալրանդյանն էլ հիմնավորում է պալեոնտոլոգիական բնորոշ վավերացրերով:

Ն. Նալրանդյանը թեև ոչ մի տեղ Դարվինի անունը չի տալիս, բայց անշուշտ պիտեք, թե ի՞նչ ազդեցություն է գործել նրա ուսմունքը խաղաղամտների վրա, ինչպիսի՞ «անբարոյական պարսպանքներ» են թափել Դարվինի հասցեին: Այդ մասին վկայում է Սիմեոն Մանիկյան կղծանվան տակ 1862 թվականին Փարիզում հրատարակված՝ Մ. Նալրանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը [3]: Այդտեղ կան մի քանի բիոլոգիական ստույթներ, որոնց մեջ ուշագրավ է մի հատված,

որտեղ Մ. Նալբանդյանը ակնարկում է Դարվինի մասին: Այդ հատվածը մենք մանրամասն վերլուծել ենք մեր «Մ. Նալբանդյանը և բնագիտությունը» աշխատության մեջ [4]: Այդ հատվածում Մ. Նալբանդյանը խոսում է խոշոր «վարդապետներին» (այսինքն՝ գիտնականներին) աշխատությունների մասին, նվիրված «բնագիտական և երկրագիտական տեսություններ, ապա ստում է, որ այդ աշխատությունները թահ ու սարսափ բերեց հասարակության վրա: Հասարակությունը տեսալ, որ այդ գրվածքը հիմն ի վեր տապալում է այնպիսի հասկացողություններ, որ գարձել է նորա հոգին, նորա պաշտական դադարվալը»: Մ. Նալբանդյանի ասելով՝ «խաչակիր արշավանք հայտարարվեց իմաստուն ուսուցիչների ընդդեմ», սխալեց «բնական հնարքները, հերքողություններ, վեճը և ի վերջո, անբարոյական պարսավանքը»:

Վերահիշյալ բնութագրությունը պարզ երևում է, որ Մ. Նալբանդյանը նկատի էր առել Չ. Դարվինին, որի «Տեսականների ծագումը», հիբուլի, մեծ ազմուկ, զիսկուսիա, հաշտության քննարկ տարալ առաջ բերեց հակառակորդիտն իդիտղեիայի հետեղների կողմից: Թեև Մ. Նալբանդյանը, ըստ երևույթին, ակնարկում է նաև «երկրագիտ» Լյակին, որի 1830 թվականին լույս տեսած, էվոլյուցիոն տեսանկյունով լուսարանված «երկրագրանություն հիմունքները» աշխատությունը նույնպես հեղաշրջում առաջ բերեց երկրագրանության մեջ, անհիմն դուրս բերեց Կրավինի տիրապետող հակաէվոլյուցիոն տեսաստրոֆների տեսությունը, բայց և այնպես դրա շարժն առաջ չեկավ այն ազմուկը, ինչպիսին նկարագրեց Մ. Նալբանդյանը: Դարվինի ուսմունքը շոշափում էր քիտղեիական մի պորոլեմ, որի իդեալետական զիրքերին ամար և երկար ժամանակ կառչած էին հակաէվոլյուցիոնիտները: Դարվինի տեսությունը հիմնովին տապալեց սեպիցիոն հասկացողությունները կենդանի բնության պրոբլեմներում: Ուրեմն, գեա մինչև Դարվինի աշխատության լույս տեսնելը, համոզված էվոլյուցիոնիտ Մ. Նալբանդյանը, ըստ տեսագլմ էվոլյուցիոնիտ բնագիտների օրինակով, ժանութանալով Դարվինի տեսությունը, արձանագրեց նրա հոյակապ գերը: Դարվինի մասին նա իմացած կլիներ Լոնդոնում, Գերցենի մոտ եղած ժամանակ (1861—1862 թվականներին):

Հետապնդումներից ավելի ազատ էր արեմատալ առաջադեմ գործիչ Գալուսս Կուսսանդյանը: Այդ է պատճառը, որ նա իր «Մեթոդին վրա» աշխատության մեջ, որ լույս տեսավ 1878 թվականին, Դարվինի անունը աալով, դասում է նրան եվրոպական աչքի ընկնող առաջուգեմ. մատերիալիտ բնագիտների շարքին: Երիտասարդության ժամանակ տարված լինելով իդեալետական հովերով, հետագայում մատերիալիտ անվանի բնագիտների աշխատությունների ազդեցությունում Գ. Կուսսանդյանը գտանում է համոզված մատերիալիտ, աթեիտ և դարվինիտ: Բիոլոգիայի բնագավառում նա ծանոթ էր Լամարկի, Գյոլնի, Բյուֆոնի, Սենտ-Իլերի էվոլյուցիոն հայացքներին և առանձնապես բարձր էր գնահատում Դարվինին, որպես հռչակավոր գիտնականի, անվանելով նրա ուսմունքը «Հանդուգն փիլիսոփայություն»: Նա հետևյալ կերպ է բնութագրում Դարվինի ուսմունքը. նա ասում է, որ Դարվինը «տեղեկական ձևափոխիլ Transformisme գիտության ուրվագիծը հորինեց, ցույց տալու համար, թե կենդանաց և մարդկային սեռի շղթաները իրարու կիսալին, թե ամեն ապրող էակները մեկ մեծ ընտանիք մը կազմեն բնական ընտրությանմը natural selection ժառանգությունմը և շրջափոխությունմը հառաջանալով» (էջ 98) [5]:

Բնագլխություն չստանալու փոխարեն Վ. Կոստանդյանին բերեց ալն համոզման, որ բնական երևույթների, մասնավորապես օրգանիզմների, ապա և մարդու ծագման, զարգացման պրոդրևիսների կրոնա-փիլիսոփայական մեկնարանություններն անհիմն են^[6]։ Իմանալով Դարվինի դրույթները մարդու ծագման մասին, Վ. Կոստանդյանն ասում է. «Դարվինի էլ ալն գիտնականներիցն էր, որոնք սկսան փոսային ու նախապատմական մարդու հետքերը փնտրել, Ադամ Նվայի մասալը ջնջելով» (էջ 102)։

Դարվինի մասին ավելի ընդարձակ խոսեց, քան Դարվինի կենդանություն օրոք, Բաֆֆին։ Մելիքաղև կեղծանվան տակ «Մշակ» թերթի մի շարք համարներում 1879 թվականին լույս է տեսնում նրա՝ «Մարդը գոյություն կովի մեջ» ակնարկը^[7]։

Այդ ակնարկը գրված է Ի. Մեչնիկովի՝ «Борьба за существование в общепном смысле» հոդվածի ազդեցության տակ («Вестник Европы», 1878, № 7)։ Հետաքրքիրանն ալն է, որ հենց սկզբից թերթի մի համարում նախ մանրամասն բնութագրում է Դարվինի ուսմունքի դրույթները, մանավանդ գոյության կովի մասին։ Այդ նախարանը հայկական մամուլում առաջին հոդվածն է Դարվինի ուսմունքի մասին։ Ուրեմն, հալ ընթերցողն առաջին անգամ Դարվինի տեսության մասին տեղեկանում է ոչ բնագետ Բաֆֆուց։ Հալ բնագետների լուծյունը դարվինիզմի նկատմամբ ալք մամանակաշրջանում դատապարտում է «Մուրճ»-ի խմբագիր Ավետիք Արասխանյանը իր մի գրախոսականում, հետագայում լույս տեսած՝ Բալաղյանի — Դարվինիզմ գրքի մասին։ Թեև շատ սակավաթիվ էին հալ բնագետները, բայց և այնպես առաջինը նրանք պետք է խոսեն Դարվինի մասին, ինչպես նշում է Արասխանյանը, առաջնությունը գրավեց Բաֆֆին։

Նշելով Դարվինի դրույթները, Բաֆֆին կանդ է անում առանձնապես գոյության կովի արտահայտությունների վրա։ Նրա ակնարկն ունի հսկայական կողմեր, բայց, հետևելով Մեչնիկովին, Բաֆֆին էլ գնմ է արտահայտվում մակթուսյան դրույթին գոյության կովում, օրգանիզմների գերաճման դերի մասին, ապա և, հսկայական սոցիալական դարվինիստների, անբնական է համարում բնականության ու սոցիալական օրինաչափությունների նույնացումը, շեշտում է մարդկային հասարակության ուրույն օրինաչափությունները։ Մակթուսյան դրույթի մասին ասում է՝ «ամենահին հարկավոր է ընդունել որպես պատճառ միայն բնականների աճող խտությունը և դրանից առաջ եկած տեղի և անդի պակասությունը»^[8]։

Բաֆֆու ակնարկի առաջին մասը հալ ընթերցողին ծանոթացնում է Դարվինի տեսության հիմնական հարցերին։ Հալ իրականության մեջ Դարվինի ուսմունքը գրավել է ոչ միայն բնագետների ուշադրությունը։ Ահա թե ինչու Դարվինի մահվանը (1882) հայկական մամուլը ձայնակեց անմիջապես։ «Մշակ» թերթում 1882 թվականին տպագրվեց ոմն հալ գործիչ Կանդիշի բնագործակ թղթակցությունը Լոնդոնից. հեղինակը, հատուկ հրավիրատուս ունենալով, ներկա էր թողմանը, ապա մանրամասն նկարագրում է նշանավոր բնագետի թողման արարողությունը։ Հալ գործիչը հալ հասարակության կողմից հարգեց Դարվինի հիշատակը^[9]։

Նույն 1882 թվականին «Մեղու Հայաստանի» թերթում լույս է տեսնում Դարվինի մահվանը նվիրված հատուկ ակնարկ՝ Տ. Ս. ստորագրությամբ։ Դարվինիզմի ուսմունքին լավ տեղյակ հեղինակը կոնկրետ բնութագրում է դար-

վինիզմը: Նա նշում է հիմնական դրույթները, բայց միաժամանակ, ըստ երկ-վույթին, մարքսիզմի կլասիկներին աշխատությունների ազդեցության տակ, քննադատաբար է վերաբերվում Դարվինի որոշ թեքի կողմերին, նրա այն արտահայտություններին, որոնք առիթ են տալիս բուրժուական իդեոլոգիայի կողմնակիցներին՝ սոցիալ-դարվինիստներին, խեղաթյուրելու Դարվինի հա-յացքները: Դարվինը գրույշ էր, նա խուսափում էր արմատական դարվինիստ-ների ռեոլուցիոն եզրակացություններից, որոշ դեպքերում ակամա քողար-կում էր իր բուն հայացքները: Սակայն այդ չէր նսեմացնում դարվինիզմի աթեիստական, հակաիդեալիստական բուն էությունը: Տ. Ս.-ն այդ կապակ-ցությամբ գրում էր. «Չնայած Դարվինի տեսության այս մի քանի թույլ կողմերին, կամ սխալ գործադրության, Դարվինը է և կմնա մի առաջնակարգ և ամենանշանավոր բնագետ, իբրև մի համարձակ և սրատես գիտնական: Բայց իբրև մտածող նա փոքր ինչ վախկոտ էր, նա չստաց այն բոլոր հետե-վությունները, որոնք ուղղակի ծագում էին նույնիսկ յուր հոյակապ տեսու-թյունից»^[8]:

Նույն 1882 թվականին «Արձագանք»-ում^[10] լույս է տեսնում, ամե-նայն հավանականությամբ, անգլիացի բնագետ-դարվինիստ Թոմաս Հեքսլիի՝ Դարվինի մահվանը նվիրված հոդվածի թարգմանությունը. այդտեղ մանրա-մասնորեն բնութագրվում է Դարվինը և նրա գործը:

Դարվինիզմի մասին արդեն անցյալ դարի 90-ական թվականներին լույս են տեսնում համոզված բնագետ-դարվինիստներ Ն. Տադավարյանի և Ս. Թա-լադյանի բնագործակ բնագիտական ակնարկները: Արեմտահայ մամուլում, «Երկրագունդ» հատուկ գիտական մուռնալում, (1884), ապա նույնը յոթ-ցուններով «Գիտական շարժում»-ում (1885), վերջապես 1901 թվականին արդեն առանձին հրատարակությամբ լույս է տեսնում Նազարեթ Տադավար-յանի «Ծարվինականություն» գիտական ընդարձակ ակնարկը: Կարելի է ասել, որ հայկական մամուլում դա առաջին գիտական ակնարկն էր դարվինիզմի մասին, ամբողջությամբ վերցրած, հագեցած և հիմնավորված բազմաթիվ փաստերով: Ն. Տադավարյանը ոչ միայն մամուլում, այլև բանավոր ելույթ-ներում պաշտարում էր հանուն բնագիտության, դարվինիզմի մատերիալիս-տական դրույթների, իր խորագրանոց **գրիչը**, խոսքն ուղղելով կրոնամոլնե-րին, խավարամիտներին. այդ պատճառով էլ՝ նա, որակվելով որպես անասու-ված, հետապնդվում, հալածվում էր ռեակցիոն շրջանների կողմից: Իրանով պետք է բացատրել, որ այդ համոզված մատերիալիստ, դարվինիստն իր «Ծարվինականություն» գիտական ակնարկում հատուկ գլուխ չի հասկացնում մարդու ծագմանը, որի մասին, սակայն, նա խոսում էր իր բանավոր ելույթ-ներում, նույնիսկ կյանքի ծագման հարցում, հակասակ իր համոզմունքին, ակամա իդեալիստական արտահայտություն է անում, առաջին կյանքի առա-ջացումը վերագրելով գելլոնական ուժին. դա գիշտություն էր հետապնդող կրոնամոլներին^[11]: Անկախ դրանից, Տադավարյանն այն տոռախ հայ բնա-գետն էր, որ հայ բնթերցողին գիտական փաստերով բավականին մանրա-մասն ծանոթացրեց դարվինիզմի մատերիալիստական, աթեիստական տե-սությունը^[12]:

Ն. Տադավարյանից հետո արեւելահայ առաջադեմ բնագետ Սամվել Բա-լադյանն էր, որ համարձակ, առանց իդեալիզմին օրե է գիշտություն անելու, պաշարից դարվինիզմի գաղափարների համար: 1890 թվականին լույս տե-

սավ նրա «Դարվինիզմ» վերնագրով ակնարկը^[13]։ Դրված լինելով մատչելի և կենսական լեզվով, այդ ակնարկը մեծ գոհունակությամբ ընդունվեց հայ ընթերցողի կողմից։ Այդ գրքի երրորդ հրատարակությունը լույս ահապ 1924 թվականին իր ժամանակ Ս. Բալազյանի «Դարվինիզմը» հայ ընթերցողի համար նախնական աչն աղբյուրն էր, որից նա ստանում էր առաջին գիտական մանրամասն տեղեկությունները Դարվինի ուսմունքի մասին։ Ընդհատակյա ուսուցողի շնորհիվ աշակերտական խմբակներում — Բաքվում, Թիֆլիսում, Շուշում, Գանձակում — դարվինիզմն ուսումնասիրելու գործում մեծ չափով օժանդակում էր Բալազյանի գրքերը։ Նա հիմք էր ծառայում դարվինիզմի վերարժեքյալ ավելի լուրջ դիտարկման աշխատություններ մշակելուն։

Դասախարակված լինելով ուսս առաջադեմ բնագիտ-դարվինիստներ Տիմիրյազևի, Մեչնիկովի, Ալեքսանդր Կոպախևի և ուրիշների մտաերիախատական դաժափաբներով, Սամվել Բալազյանը, ախտի, բխողգիական բոլոր պրոբլեմներում անց էր կացնում առաջադեմ մատերիալիստական դրույթները։ Բալազյանի ակթիստական, դարվինիստական պրոպագանդան նույնպես խափարամիտ կրոնականների շրջանում առաջ բերեց հակադրոհ-դժգոհություն և հալածանք, որի պատճառով նա ստիպված եղավ հեռանալ Թիֆլիսի նեոսիսյան հոգևոր սեմինարիայից, հրաժարվել անսչի պաշտոնից^[14]։

Հախարան դպրոցները կնթարկվում էին հոգևոր մարչությունը, այդ է պատճառը, որ աչն մատերիալիստ, դարվինիստ բնագիտ-դասատուները, որոնք միշտ առկթ էին դառնում աշակերտության մեջ տարածելու դարվինիզմի գաղափարները, բնագիտության ակթիստական դրույթները, հալածվում էին, հաճախ զրկվում պաշտոնից և խափարամիտ հոգևորականների ինտրիզների զոհ դառնում։ Դարվինիզմի հարցի շուրջը միջադեպեր և բնդհարումներ եղել են Շուշու հոգևոր սեմինարիայում, բնագիտ Լևոն Սարգսյանի տեսչության օրով նրա դեմ, բնագիտ Ալիտիք Տեր-Պողոսյանի տեսչության օրով նրա դեմ։ Նման մի ընդհարամ դարվինիզմի պատճառով եղի է և 1915—16 թվականներին էջմիածնի Դեորգյան ճեմարանում։

Ինչպես նշեցինք, դարվինիզմը ուսումնասիրություն տառիկա էր բնդհատակյա ուսույցի խմբակներում։ Դարվինի ուսմունքը գրավել էր հայ ուսույցի զործիչների ուշադրությունը։ Առկիան Շահումյանը դեռ ուսանողության օրով ուսումնասիրել էր Դարվինի հիմնական աշխատությունները։ Ինչպես երեում է նրա ձեռագիր նյութերից (գտնվում են Հայաստանի ԿԳ ԿԿ-ի արխիվում), Ս. Շահումյանը բավական ուշադիր ուսումնասիրել է Դարվինի «Շուրջերկրյա ճանապարհորդությունը» («Իգլ» նավի վրա» աշխատությունը։ Շահումյանը պիտեր, որ սոցիալ-դարվինիստներն օգտագործում էին դարվինիզմի դրույթները բուրժուադիալի իմպերիալիստական քաղաքականությունը, ոստայական կիզծ տեսությունը արդարացնելու, հիմնավորելու համար, ահա թե ինչու Ս. Շահումյանը վերահիշյալ աշխատությունից քաղվածորեն բերում է Դարվինի աչն արտահայտությունները, որոնք ուղղված են ստրկության, ոստիզմի, իմպերիալիստական գաղութարարների դեմ։ Ս. Շահումյանը քննադատում է նրանց, ովքեր նույնացնում են բխողգիական և սոցիալական օրինաչափությունները։ Այդ առթիվ իր ձեռագրում նա հետևյալ դիտողությունն է անում. «Մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմությունը, ուստի ոչ մի հիմք չկա պատմությունը՝ մարդկային ձեռքերի գործը, վերածել հասարակ գոյություն կովի»^[15]։

XX դարի սկզբներում. դարվինիզմի տարածումը հայերի մեջ լուրջ մտահոգություն է առաջ բերում կրոնականների, իդեալիստների շրջաններում: Դարվինի ուսմունքն ուժեղացնում է մատերիալիստների, աթեիստների դիրքերը: Դարվինիզմի դեմ պայքարում էին տարբեր մեթոդներով՝ ուղղակի հետապնդողներով, անեմքներով, պարսպալանքներով, հալածելով դարվինիզմի կողմնակիցներին, կամ էլ լուրսօրինակ, այսպես կոչված՝ «գիտական» ղեկավարով էին ճգնում հաշտեցնել գիտությունը, դարվինիզմը կրոնի հետ: Դարվինիզմն ընդունում էին, բայց մինչև որոշ սահմանը՝ այն է մարդու և առաջին կյանքի ծագումը վերադրում էին Կերբուական ուժին, իսկ օրգանիզմների էվոլյուցիայի վերաբերյալ թեև չէին առարկում դարվինիզմի առաջադրած օրենքներին, բայց դրանց սահմանումը վերադրում էին արարչին, իսկ Դարվինին համարում էին լոկ որպես այդ օրենքների մեկնարանոց: Այսպես էին դատում որոշ միսթարականներ, որոնք այդօրինակ մոտեցումով ճգնում էին չեղճացնել դարվինիզմի աթեիստական ազդեցությունը^[16]: Դարվինիզմի կրոնա-իդեալիստական քննադատների դեմ դուրս էին գալիս դարվինիստ հայ մատերիականները, օրինակ՝ Մալաքյանը, էլեմը, Հայկը և ուրիշներ: Թիֆլիսի Մալաքյանը իր «Արարիչը գիտություն առջև» ակնարկում^[17] (1911, Պոլիս) գիտական օրինակներով դրսևորում է դարվինիզմի մատերիալիստական, աթեիստական էությունը, էլեմը «Դարվինիզմը որպես հասարակական տեսություն»^[18] ընդարձակ հոդվածում սուր քննադատություն է ներթափում սոցիալ-դարվինիստներին, որոնք խեղաթյուրված դարվինիզմով մեկնաբանում են հասարակական օրինաչափությունները^[19]: Հայկը, համաձայն Դարվինի դրույթների, լուստարանում է մարդու ծագման պրոբլեմը^[20]:

Դարվինիզմի առանձին հորցերի մասին լույս են տեսնում ինքնուրույն և թարգմանական նյութեր, օրինակ, Տեր-Ալեքանդրյանի «Բնագնանոր բեղմնավորություն և Դարվինի պանդեմոնիզմը» («Արարատ», 1881)^[21], Ն. Մուրադյանի «Բնարությունը բնության մեջ» («Արարատ», 1881)^[22], Ավ. Տեր-Պողոսյանի «Դարվինը և նրա ուսմունքը» (Թիֆլիս, «Գործ», 1909), Խ. Գաբրիելյանի «Մարդու ծագման մասին» (Թիֆլիս, «Արոր», 1911, Շնոր հոսանք», 1913) և ուրիշներ: Թարգմանական նյութերից են՝ Դարվինի «Մարդու ծագումը» աշխատության մի գլուխ («Կայծ», 1911, № 8, 11—12), Դոդևի «Մովսես և Դարվին» (առանձին գրքով, Կիրաստոն, 1912, և «Մուրճ»-ում, Թիֆլիս, 1907, № 2), Ֆրեյերի «Էվոլյուցիոն ուսմունքի կրթաբանական լեզվագիտություն մեջ» ակնարկը, («Կայծ», Պոլիս, 1913, № 2), Կ. Տիմիրյազևի «Դարվինը և նրա ուսմունքը» գրքից մի գլուխ (Բաքու, 1907)։

Մեր ալս ակնարկում մենք կանգ առանք այն նյութերի և իրադարձությունների վրա, որոնք հայտանշում են, դեռ 1844 թվականից սկսած, արձագանքները հայկական մամուլում, իրականության մեջ էվոլյուցիոն ուսմունքի, դարվինիզմի նկատմամբ: Հայ հասարակայնությունը, հայ առաջադեմ մատերիականները (քնազեաներ և ոչ քնազեաներ) առանձնահատուկ հետաքրքրություններ են ցուցաբերել Դարվինի հոյակապ ուսմունքին, հասկացել են նրա մատերիալիստական, աթեիստական էությունը: Եղել են և քննադատություններ կրոնականների և խավարամիտների կողմից, բայց դրանց անհիմն, փաստազուրկ, փրացական պատճառաբանությունները չեն գիմացել մարանչող աթեիստ, դարվինիստ գործիչների գրոհին: Հայ առաջադեմ գիտականները, հասարակական գործիչները ըմբռնել են Դարվինի

ուսմունքի մատերիալիստական գրույթները և տարածել բանավոր ելույթներում ու մամուլում:

Հոկտեմբերյան ռեուլյուցիայից հետո, Սովետական Հայաստանում էլ մարքսիզմի կուսակիցների տեսանկյունով մեկնաբանված՝ Գարվինի ուսմունքը տարածվում է լայնորեն, բնագիտական հիմք ծառայելով մատերիալիստական, մարքսիստական աշխարհայեցողության մշակման գործում: Գարվինիզմի որոշ թերի կողմերը չեն նսեմացնում նրա մատերիալիստական, ռեուլյուցիոն էությունը: Նոր փաստերը, լրացումները, նրա գրույթների կիրառումը պրակտիկ կյանքում Ի. Վ. Միչուրինի և նրա հետևորդների նվաճումներն անկախ են բարձրացնում գարվինիզմի տեսական ու գործնական նշանակությունը: Մեր երկրում գարվինիզմը հզոր զենք է դարձել՝ մարզու ներգործությունում և ցանկացած ուղիով վերափոխելու բուսական ու կենդանական օրգանիզմները:

Հոկտեմբերյան ռեուլյուցիայից հետո բազմաթիվ նոր, երիտասարդ կադրեր, մասնագետ բնագետներ բանավոր և գրավոր ելույթներով դարգացնում, տարածում են գարվինիզմը: Սովետահայ մամուլը հարուստ է գարվինիզմի պրոպագանդային, սոսկողագործ գարվինիզմի նվաճումներին նվիրված նյութերով: Այդ աշխատանքների ամփոփումը պահանջում է հատուկ ուսումնասիրություն:

Գ Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. «Բարձրագույն», Վենետիկ, 1844, № 1—2 («կենդանայի բաժանումը»):
2. «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1858, № 3, երկեր, հատ. 2:
3. Մ. Ն ա լ լ ա ն զ յ ա ն — Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, 1862, Երկեր, 1940, հատ. 3:
4. Ռ. Գ ա ռ ի ե լ յ ա ն — Միքայել Նալբանդյանը և բնագիտությունը, Արմֆանի տեղեկագիր, Երևան, 1940, № 1—2:
5. Գ. Կ ո ս ա ն զ յ ա ն — Մեթոդին վրա. De la *methode*, Իզմիր, 1878:
6. Ռ. Գ ա ռ ի ե լ յ ա ն — Գալուստ Կոստանդյանի բնագիտական հայացքները, Հեռակա Մանկավարժական ինստիտուտի Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 1956, № 3:
7. Մ ե լ թ ք ա ղ Է (Բաֆֆի) — Մարդը գոյություն է ունենում, «Մշակ», Թիֆլիս, 1879, № 186—191:
8. Ռ. Գ ա ռ ի ե լ յ ա ն — Գարվինիզմի մի քանի հայ մեկնաբաններ 70—80-ական թվականներին. Հայկական ՍՍԽ ԳԱ Հայ բժշկության և բնագիտության սեկտորի «Աշխատություններ», 1949, № 2:
9. «Մշակ», Թիֆլիս, 1882, № 80, 82 (Լանգիշի թղթակցություն. Լոնդոնից):
10. «Արձագանք», Թիֆլիս, 1882, № 10 (Գարվինի մասին):

* Կարևոր ենթ համարում արձանագրել, որ չնայած հայ հասարակայնության մեծ հետաքրքրությունը Գարվինի և նրա ուսմունքի նկատմամբ, հայ ընթերցողը բավարարված չէ և մեծ պահանջ է դրում Գարվինի՝ առաջին հերթին — «Տեսականների ծագումը», «Մարդու ծագումը», «Շուրջերկրյա ճանապարհորդությունը Քիլզ» նաև վրա աշխատությունների հրատարակման: Թեև «Տեսականների ծագումը» լույս տեսավ 1935 թվականին, բայց անհաջող թարգմանություններ և վատ հրատարակություններ, իսկ երրորդ աշխատությունը թեև լավ է հրատարակված, բայց վատ է թարգմանված:

11. Ն. Տ ա դ ա վ ա ղ յ ա ն — Տարվինականություն, «Ներկրագունդ», 1884, «Գիտական շարժում» — 1885, առանձին հրատարակություն — 1901 (Պոլիս)։
12. Ռ. Գ ա բ Ր ի ե լ յ ա ն — Արևմտահայ առաջավոր բնագետ-բժիշկ Նազարեթ Տաղավարյան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հայ բժշկութ, և բիոլոգիայի պատմութ. սեկտորի «Աշխատություններ», 1918, № 1։
13. Ս. Բ ա լ ա ղ յ ա ն — Դարվինիզմ, Թիֆլիս, 1890, 1901, (1926, Երևան)։
14. Ի. Գ ա բ Ր ի ե լ յ ա ն — Հայ առաջավոր բնագետ Սամվել Բալադյանի կյանքն ու գործունեությունը, Հեռակա Մանկ. ինստ. գիտական աշխատությունների ժողովածու, 1956, № 3։
15. Ռ. Գ ա բ Ր ի ե լ յ ա ն — Ստեփան Շահումյանը և դարվինիզմը, Հեռակա Մանկ. ինստ. գիտական աշխատութ. ժողովածու, 1955, № 2։
16. Ռ. Գ ա բ Ր ի ե լ յ ա ն — Վենեսաիկի մեթոթարյանները և դարվինիզմը, Հայկական ՍՍՌ ԳԱ Հայ բժշկութ. և բիոլոգ. պատմութ. սեկտորի «Աշխատութ.» 1918, № 1։
17. Մ ա լ ա ք յ ա ն — Արարիչը գիտություն առջև, Պոլիս, 1911։
18. Է լ ե ժ — Դարվինիզմը որպես հասարակական տեսություն, «Սրկսւնը», Պոլիս, 1912, № 1—8։
19. Ռ. Գ ա բ Ր ի ե լ յ ա ն — Դարվինի ուսմունքի արձագանքներն արևմտահայ գրականությունում, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (բիոլոգ. գիտութ. սերիա), հատոր X, № 4, 1957։
20. Հ ա յ կ — Մարդու ծագումը, «Կայծ», Պոլիս, 1912, № 2, 10—12։
21. Տ ե բ-Ա վ ե տ ի կ յ ա ն — Ընդհանուր բեղմնավորություն և Դարվինի պանդենեզիսը, «Արարատ», Էջմիածին, 1881, № 6։
22. Ն. Մ ու բ ա տ չ յ ա ն — Բնությունը բնություն մեջ, «Արարատ», 1881, № 9։
23. Դարվինի զգվարությունը — «Բյուրական», Պոլիս, 1881, № 45։

В. О. ГУЛКАНЯН

О ВЗАИМООТНОШЕНИЯХ РАСТЕНИЙ В ИХ СООБЩЕСТВЕ

Коротко о взаимоотношениях организмов в природе

В дни, когда отмечается 150-летие со дня рождения великого естествоиспытателя Чарльза Дарвина, а спустя несколько месяцев будет отмечено 100-летие выхода в свет его гениального труда — „Происхождение видов путем естественного отбора“, мы еще раз с глубоким восхищением констатируем бессмертие его научных творений.

Из вопросов, которые выдвинул Дарвин, одним из первостепенных является взаимоотношение живых организмов. Он тесно связан с основной и гениально разрешенной проблемой дарвинизма, с происхождением видов. Эта проблема изучалась им долго, кропотливо, на основании сбора и анализа громадного количества материалов из природы и практики сельского хозяйства.

Организмы в природе, а также в производстве неизбежно вступают в некоторые взаимоотношения, получая питательные вещества из окружающей среды. В поисках основы для объяснения этих взаимоотношений Чарльз Дарвин счел возможным пользоваться „учением Мальтуса“ об „арифметическом“ увеличении средств существования и „геометрическом“ увеличении населения. Но одновременно Дарвин предупреждал, что „учение“ Мальтуса он применяет в самом широком понимании. Великий К. А. Тимирязев, защищая Дарвина и дарвинизм от нападок антидарвинистов, утверждал, что объяснение взаимоотношений живых организмов, как борьба за существование, была дана ради удобства ([6], стр. 252). Он исходил из разъяснения самого Дарвина, применившего, по его же словам, — „... в широком метафорическом смысле, включая сюда зависимость одного существа от другого, а также подразумевая (что еще важнее) не столько жизнь одной особи, но и успех ее в обеспечении себя потомством“ (там же).

Следуя примеру К. А. Тимирязева, дарвинисты и в настоящее время убедительно доказывают, что мальтузианство ничего общего не имеет с дарвинизмом. Еще классики марксизма указали на то, что Дарвин в своем упомянутом выше труде опровергает миф об арифметической прогрессии роста численности животных и растений, то есть средств существования человека и его общества. Но отсюда можно было бы прийти к заключению, что перенаселенность относится к миру растений и животных, требующих определенного пространства на земле для своего существования, в процессе чего между ними возникают определенные взаимоотношения, обуславливающие то, что

наблюдается в природе. А наблюдаемая картина показывает, что способность размножения, возможность плодоношения у живых организмов хотя и громадная, но она никогда не реализуется в полной мере, поэтому в природе не наблюдается перенаселенности. Т. Д. Лысенко отмечает, что — „...перенаселенности в природе, как правило, не было, нет и не может быть“ ([7], стр. 529).

Если нет перенаселенности в природе, то это означает, что правильное объяснение взаимоотношений, допустим, борьбы или гармонии между организмами следует искать в другом направлении, а не исходя из положения о перенаселенности.

